

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նանե Սահակյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

21-րդ դարից սկսած՝ աշխարհի ամենատարբեր պետություններում, որոնք զարգացել են միմյանցից անկախ, ձևավորվել են իրար բավականին նման գնման ընթացակարգեր: Թերևս դրանով է բացատրվում գիտական մեծ հետաքրքրությունը գնման ընթացակարգերի նկատմամբ, որոնք տարբեր աղբյուրներում կոչվում են տարբեր անուններով՝ գնման միջոցներ¹, գնման մեթոդներ², առևտրային գործընթացներ³, պատվերի տրման ձևեր⁴, պայմանագրի կնքման միջոցներ⁵ և այլն:

Թեև գնում կատարելու ընթացակարգերը տարբերվում են տարբեր երկրներում, սակայն գնումների ոլորտի մասնագետները հիմնականում նախընտրելի են համարում մրցութային ընթացակարգերի կիրառումը, որոնք հաճախ կիրառվում են նաև մասնավոր ընկերություններում: Մրցութային ընթացակարգերի կիրառմանը նախապատվություն տալը պատահական չէ, քանի որ դրանց միջոցով են առավելապես ապահովվում գնումների թափանցիկությունը, հրապարակայնությունը, մասնակիցների իրավահավասարությունը, գնումների տնտեսվարությունը, արդյունավետությունը⁶: Ուստի դա է պատճառը, որ կարևորվում է հենց մրցութային ընթացակարգերի իրականացման, դրանց զարգացման անհրաժեշտությունը⁷:

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ գնում կատարելու ընթացակարգեր են համարվում՝

- 1) էլեկտրոնային աճուրդը,
- 2) մրցույթը, որը կարող է լինել բաց և փակ. փակ մրցույթը՝ նաև նպատակային կամ պարբերական,
- 3) գնանշման հարցումը,

¹ Տե՛ս **Савина С.В.** Основные новеллы в законодательном регулировании проведения конкурсов при размещении государственных и муниципальных заказов// Предпринимательское право. 2006. № 2. СПС «КонсультантПлюс», Կարգ. 12:

² Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (United Nations Commission on International Trade Law, UNCITRAL) մշակած՝ «Պետական գնումների մասին» մոդելային օրենքի 18-րդ հոդվածը, էլեկտրոնային աղբյուր՝ <https://www.uncitral.org/pdf/english/texts/procurement/ml-procurement-2011/2011-Model-Law-on-Public-Procurement-e.pdf>, վերջին մուտքը՝ 07.12.2018 թվականին:

³ Տե՛ս **Плахин А.А.** Защита коммерческих и иных законных интересов участников размещения государственных и муниципальных заказов. Новые тенденции в законодательстве // Предпринимательское право: вызовы времени /Под общ. ред. д.ю.н., проф. Олейник О.М., д.ю.н. Фогельсона Ю.Б. М., 2009, էջ 299:

⁴ Տե՛ս **Зими́на Л.А.** Практика государственных и муниципальных закупок в Германии // Госзаказ управление, размещение, обеспечение, 2008, № 11, էջ 106:

⁵ Տե՛ս **Андреев И.А.** Финансовые услуги для естественных монополистов: конкурсное заключение договора // Подготовлен для системы КонсультантПлюс. СПС КонсультантПлюс, 2011, Կարգ. 941-944, **Гладков В.С.** Государственный заказ в сфере государственного управления экономикой, Дисс., к.ю.н. Ростов-на-Дону, 2008, էջ 10:

⁶ Տե՛ս **Нестерович Н.В.** Прокьюремент: принципы организации закупки продукции для государственных нужд // Конкурсные торги, 1998, N 9, էջ 44-46:

⁷ Տե՛ս, օրինակ, **Нестерович Н.В., Смирнов В.И.** «Конкурсные торги на закупку продукции для государственных нужд», ИНФРА-М, М., 2000.

4) մեկ անձից գնումը:

Մրցույթը նույն օրենքով նախատեսված դեպքերում կարող է կատարվել երկու փուլով: Գնումներ կարող են կատարվել ապրանքի, աշխատանքի կամ ծառայության բորսաներից՝ գնում կատարելու ընթացակարգով:

Գնումների կատարման նախընտրելի ձև է համարվում մրցույթը, եթե գնման առարկան ներառված չէ էլեկտրոնային աճուրդի միջոցով կամ փակ պարբերական մրցույթով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակներից որևէ մեկում: Գնումները կարող են կատարվել գնման այլ ձևերով **բացառապես օրենքով նախատեսված դեպքերում**: Այսինքն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի¹ համաձայն՝ գործում է մրցույթի եղանակով գնում կատարելու նախապատվության կանոնը:

Գնման ընթացակարգերից **էլեկտրոնային աճուրդն** էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ նոր՝ նվազեցված գների ներկայացման գործընթաց է, որը հնարավորություն է տալիս ավտոմատ գնահատման մեթոդներով (միջոցներով) որոշել հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը՝ հաջորդականությունը: Էլեկտրոնային աճուրդը հիմնվում է բացառապես գների վրա: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ՀՀ կառավարությունը սահմանում է ոչ միայն էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը, այլ նաև էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը («էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2017 թվականի թիվ 534-Ն որոշմամբ²): Նկատի ունենալով, որ էլեկտրոնային աճուրդի միակ չափանիշը գինն է, գրականության մեջ ընդունված է այն տեսակետը, որ այս եղանակով կարող են ձեռք բերվել միայն հասարակ գնման առարկաներ, մինչդեռ, օրինակ, շինարարական աշխատանքները դժվար է համարել հասարակ, ուստի դրանք էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվել չեն կարող³:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ կառավարության սահմանած վերոնշյալ ցուցակում ներառված են նաև այնպիսի ապրանքներ կամ ծառայություններ (օրինակ՝ ռենտգեն սարքեր, այստորոշման սարքավորումներ, անզգայացման և վերակենդանացման սարքեր, գործիքներ և պարագաներ կամ օրինակ պրոթեզաօթյապետիկ պարագաների պատրաստում և վերանորոգում, աչքի պրոթեզի տեղակայման ծառայություն և այլն), որոնք ձեռք բերելիս միայն գինը չափանիշ դիտելը, կարծում ենք, արդարացված չէ: **Հետևաբար գտնում ենք, որ անհրաժեշտ է նշված ցուցակը վերանայել:**

Գործող օրենսդրությամբ գնման ընթացակարգ է համարվում նաև գնանշման հարցումը, և գնումը կարող է կատարվել այս ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի (մեկ միլիոն ՀՀ դրամ) յոթանասունապատիկը, և գնման առարկան ներառված չէ էլեկտրոնային աճուրդի միջոցով կամ փակ պարբերական մրցույթով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակներից որևէ մեկում:

¹ Ընդունվել է 16.12.2016 թվականին, ուժի մեջ է մտել 25.04.2017 թվականին, սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2017.01.25/5(1280) Հոդ.57:

² Ուժի մեջ է մտել 31.12.2017 թվականին, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2017.05.31/33(1308), Հոդ.540:

³ Տե՛ս, օրինակ, **Антонов Д.Г.** О размещении заказов на выполнение строительных работ на аукционах // Госзаказ: управление, размещение, обеспечение, 2007, N 10, էջ 66-71, **Андреева Л.** Аукцион в электронной форме: новые правила и новые проблемы // Хозяйство и право, 2009, N 11, էջ 27-35:

Մեր գնահատմամբ գործող օրենսդրությունը չի սահմանում գնանշման հարցման առանձնահատկությունը՝ բավարարվելով միայն վերը նշված պայմաններով, ինչպես նաև նախատեսելով, որ կիրառվում են պայմանագրի կնքման վերաբերյալ ընդհանուր կանոնները՝ բացառությամբ ժամկետների, որոնք ավելի սեղմ են¹: Մինչդեռ տեսության մեջ նշված ընթացակարգին վերագրվում են մի շարք կարևոր առանձնահատկություններ:

Այսպես, Լ. Վ. Անդրեևայի կարծիքով, գնանշման հարցումը կիրառվում է այն դեպքում, երբ գնման առարկան առկա է շուկայում (այլ ոչ թե ձևավորվում է պատվիրատուի հատուկ պատվերով), այսինքն՝ գնման առարկայի շուկան արդեն իսկ ձևավորված է: Հաղթող է համարվում նվազագույն գնանշում առաջարկած մասնակիցը: Ընդ որում, տեսության մեջ հաճախ գնանշման հարցումն ինքնուրույն ընթացակարգ չի համարվում, այլ դիտարկվում է որպես աճուրդի պարզեցված կարգ²:

Կ. Վ. Կուզնեցովի գնահատմամբ՝ գնանշման հարցումը հաճախ կիրառվում է՝ մոռանալով այն կարևորագույն սահմանափակումները, որոնք կապված են այս ընթացակարգի հետ: Որպեսզի այս ընթացակարգը կիրառվի, գնման առարկան պետք է ունենա գործող շուկա, այլ ոչ թե ստեղծվի պատվիրատուի հատուկ պահանջով: Այլ խոսքով՝ պետք է հնարավոր լինի այդ առարկան ձեռք բերել՝ անկախ պատվիրատուի պահանջից (օրինակ՝ հեռուստացույցը պատվիրատուի կոնկրետ պահանջով չի պատրաստվում, այն շուկայում գոյություն ունի՝ անկախ այդ պահանջից): Հեղինակի կարծիքով՝ նման ընթացակարգով առնվազն չի կարելի ձեռք բերել հազվագյուտ արտադրանք³:

Մեր կողմից ուսումնասիրվել են գնանշման հարցում ընթացակարգով կազմակերպված գնումների մի շարք հայտարարություններ, հրավերներ և պայմանագրեր⁴: Հանգել ենք այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետությունում նշված ընթացակարգը կիրառվում է անկախ ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության առանձնահատկություններից: Որևէ օրինաչափություն հնարավոր չէ առանձնացնել այս ընթացակարգով ձեռք բերվող գնման առարկաների կապակցությամբ: Կարող ենք եզրահանգել, որ կիրառվող միակ չափանիշը եղել է գինը՝ յոթանասուն միլիոն ՀՀ դրամը չգերազանցելը, որովհետև տրամաբանական չէ և՛ լայն սպառման առարկաները (օրինակ՝ սննդամթերքը, վառելիքը) նույն պարզեցված ընթացակարգով ձեռք բերելը, և՛, օրինակ, մթնոլորտային օդում փոշու ստացիոնար ավտոմատ անալիզատոր կամ քիմիական նյութեր կամ գազատուրբինի և շոգետուրբինի հիմքերի նստվածքների գեոդեզիական չափման ծառայություններ ձեռք բերելը:

Նման անորոշությունից, մրցակցության սահմանափակման վտանգներից խուսափելու նպատակով՝ կարծում ենք, որ գնանշման հարցման ընթացակարգի կիրառման պայմանները պետք է մանրամասնեցվեն՝ նախատեսելով, որ այս եղանակը կա-

¹ Տե՛ս «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ձանաչելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին հավելվածով սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 80-րդ կետը:

² Տե՛ս **Андреева Л.В.** Закупки товаров и энергосервисных работ для федеральных государственных нужд: правовое регулирование, 2-е изд., перераб. и доп. – М.: «Волтерс Клувер», 2011, պարագրաֆ 4.3.1, ինտերնետային աղբյուր՝ <http://www.twirpx.com/file/533493/>, վերջին մուտքը՝ 07.12.2018 թ.:

³ Տե՛ս **Кузнецов К.В.** Основные проблемы размещения заказа способом запроса котировок // Государственные и муниципальные закупки-2008. Сборник докладов III Всероссийской практической конференции-семинара. - М.: ИД «Юриспруденция», 2008, էջ 98:

⁴ Տե՛ս http://www.gnumner.am/hy/page/gnanshman_harcman_haytararutyun_ev_hraver/1, վերջին մուտքը՝ 07.12.2018 թվականին:

րելի է կիրառել միայն արդեն իսկ ձևավորված, գործող շուկա ունեցող գնման առարկաների նկատմամբ, երբ գնման գինը չի գերազանցում սահմանված չափը:

Ընթացակարգի կիրառման արդյունավետությունն ապահովելու համար կարելի է նաև սահմանել այն ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների **ցանկը (ոչ սպառիչ)**, որոնց դեպքում սույն ընթացակարգը կարող է կիրառվել: Այլապես ներկա կարգավորման պայմաններում ստացվում է, որ եթե գնման առարկայի գինը չի գերազանցում յոթանասուն միլիոն դրամը, ներառված չէ էլեկտրոնային աճուրդի միջոցով կամ փակ պարբերական մրցույթով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակներից որևէ մեկում, ապա կարող է կիրառվել սույն ընթացակարգը: Մինչդեռ նման մոտեցումը չի համապատասխանում սույն ընթացակարգի և ընդհանրապես գնումների կազմակերպման սկզբունքների էությանը, քանի որ առանց կանխատեսելի չափանիշների սահմանափակում է հնարավորինս մեծ քանակությամբ մասնակիցների ներգրավումը սույն ընթացակարգին:

Գնման մյուս ընթացակարգը մեկ անձից գնումներն են: «Գնումների մասին» ՀՀ օրենքից պարզ է դառնում, որ գնումը կարող է կատարվել մեկ անձից նշված մի քանի իրավիճակներից մեկի ժամանակ.

1) եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ.

2) եթե արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ, և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել.

3) եթե պատվիրատուն, որևէ անձից կատարելով ապրանքների գնում, որոշում է սկզբնական պայմանագրում չներառված, սակայն օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով՝ սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կատարել նույն անձից,

4) եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը (մեկ միլիոն ՀՀ դրամը).

5) եթե գնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

Գնումների ընթացակարգերից մեկ անձից գնումները միշտ հանրության ուշադրության կենտրոնում են՝ նկատի ունենալով վերջինիս ոչ մրցակցային բնույթն ու հնարավոր չարաշահումներ թույլ տալու վտանգը: Այսպես, օրինակ, Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը 2013 թվականին հրապարակել է աշխատանքային փաստաթուղթ Հայաստանի Հանրապետությունում մեկ անձից հանրային գնումների վերաբերյալ, որում մասնավորապես նշվել է, որ նկատելի են որոշ պատվիրատուների կողմից որոշ մասնակիցների նախապատվություն տալը և նրանց հետ պարբերաբար մեկ անձի հիմքով գնումների իրականացում¹:

Ստահոգիչ ցուցանիշ է արձանագրվել նաև նույն կազմակերպության կողմից 2014-2015 թվականների ընթացքում կատարված պետական գնումների մոնիտորինգային հաշվետվությունում²: Մասնավորապես նշված կազմակերպությունն արձանագրել է, որ 2011-2015 թվականներին կայացած մրցույթների շուրջ 65%-ը իրականացվել են մեկ անձից գնման ձևով: Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպ-

¹ Տե՛ս https://transparency.am/files/publications/SSP_2.pdf կայքում, վերջին մուտքը՝ 07.12.2018 թվականին:

² Տե՛ս <https://transparency.am/files/publications/1450716758-0-713489.pdf> կայքում, վերջին մուտքը՝ 07.12.2018 թվականին:

ցիոն կենտրոնի գեկույցում ընտրանքային կարգով իրականացվել է նույնատիպ ապրանքների, օրինակ՝ համակարգչային տեխնիկայի, մեկ անձից ձեռքբերումներով կնքված պայմանագրերի գնային ուսումնասիրություն, և պարզվել է, որ պետական գնումներով մեկ անձից գնումները շուկայականից բարձր են շուրջ 30%-ով: Ավելին, միջազգայնորեն ընդունված նորմերի համաձայն՝ մեկ անձից կատարված գնումները չպետք է գերազանցեն 10%-ը քանակային առումով և 5%-ը գումարային առումով, մինչդեռ փաստերը ցույց են տվել, որ այս սահմանաչափերը գերազանցվում են 5 և ավելի անգամ:

Նմանատիպ հետազոտություն կատարվել է նաև 2016-2017 թվականների համար¹: Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը մեկ անձից կատարվող գնումների կապակցությամբ վեր է հանել, մասնավորապես, հետևյալ խնդիրները՝ ամենատարածվածը մինչև բազային միավորը՝ 1.000.000 ՀՀ դրամը, պայմանագրային գնով կնքված պայմանագրեր են, որոնց թիվը հասել է 2472-ի: Ընդ որում, երբեմն նույն ընկերության հետ նույն ժամանակահատվածում կնքվել են մեկից ավելի պայմանագրեր բազային միավորը չգերազանցելու համար: Օրինակ՝ ՀՀ կառավարության աշխատակազմը 2016 թվականի դեկտեմբեր ամսվա մեջ 840, 648 և 825 հազարական դրամ պայմանագրային գներով երեք պայմանագրեր է կնքել «Ակտիս» ՍՊԸ-ի հետ գրառումների տեսրեր գնելու համար: Մեկ այլ օրինակ կարող է լինել ՀՀ Ազգային ժողովի և Կարեն Քոսոյան ԱԶ-ի միջև կնքված նույն ամսում բազային միավորից ցածր մեկից ավելի պայմանագրերը:

Մեկ այլ լուրջ հիմնախնդիրն այն է, որ մեկ անձից գնման պայմանագրերում շատ դեպքերում բացակայում է գնման այս ոչ մրցակցային ընթացակարգի կիրառման պատճառաբանված հիմնավորումը: Մասնավորապես՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի ընտրած՝ ՀՀ կառավարության կողմից գնման գործընթաց կազմակերպելու մասին 2017 թվականին ընդունված 7 որոշումներից միայն 2-ում է եղել նման գործընթաց անցկացնելու պատճառաբանված հիմնավորումը:

Մեկ անձից գնումներ կատարելու վերաբերյալ մտահոգիչ ցուցանիշներ է ներկայացրել նաև ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը: Մասնավորապես՝ 2018 թվականի տարեկան գործունեության ծրագրի համաձայն՝ բժշկական հաստատություններ որոշ ծառայություններ ձեռք են բերել ոչ մրցույթային եղանակով: Պարզվել է նաև, որ որոշ դեպքերում մրցակցություն չի եղել (մրցույթին մասնակցել և հաղթել է միայն մեկ ընկերություն) պայմանավորված այն հանգամանքով, որ կան ապրանքներ, որոնք մատակարարում է ընդամենը մեկ ընկերություն: Խնդիրը հիմնականում վերաբերում է լաբորատոր փորձաքննության համար անհրաժեշտ նյութերի (թեսթերի) ձեռքբերմանը: Համաձայն ուսումնասիրության արդյունքների՝ բժշկական հաստատությունների լաբորատոր փորձաքննության սարքավորումները (անալիզատորներ) աշխատում են միայն տվյալ ապրանքային նշանի նյութերով, այդ պատճառով բժշկական հաստատությունները չունեն այլընտրանք: Այս կապակցությամբ Հանձնաժողովը բացահայտել է նաև մեխանիզմ, երբ բժշկական հաստատությանը լաբորատոր փորձաքննության սարքավորումներ են տրամադրվել անվճար՝ հաստատությանը նյութերի ձեռքբերման հարցում դնելով կախվածության մեջ²:

Մեր կարծիքով՝ վերոգրյալ խնդիրներն ավելի քան վկայում են այն մասին, որ մեկ անձից գնում կատարելը պետք է իրականացվի բացառիկ դեպքերում, երբ

¹ Տե՛ս <https://transparency.am/files/publications/1507283451-0-397636.pdf#page=14&zoom=100,0,96>, կայքում, վերջին մուտքը՝ 07.12.2018 թվականին:

² Տե՛ս ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2018 թվականի տարեկան գործունեության ծրագիրը http://competition.am/uploads/resources/Annual_Program_2018.pdf կայքում, վերջին մուտքը՝ 07.12.2018 թվականին:

անհնար կամ ոչ արդյունավետ է մնացած ընթացակարգերի կիրառումը: Մեր խորին համոզմամբ՝ արդարացված չէ մեկ անձից գնումը պայմանավորել միայն այն բանով, որ գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը (մեկ միլիոն ՀՀ դրամը): Նման պայմանը հղի է մրցակցությունը սահմանափակելու լուրջ վտանգներով և կարող է չարաշահումների տեղիք տալ: Եթե մնացած հիմքերն ըստ էության օբյեկտիվ իրավիճակներ են, որոնց դեպքերում մեկ անձից գնում կատարելն արդարացված է, ապա միայն գնման առարկայի արժեքով գնման ընթացակարգը պայմանավորելը հիմնավորված չենք համարում՝ նկատի ունենալով նաև վերոնշյալ մտահոգիչ երևույթները:

Նշված հարցի լուծում կարող է լինել մեկ անձից գնում կատարելու փոխարեն գնանշման հարցման ընթացակարգի կիրառման պայմանների հստակեցումն օրենսդրությամբ: Կարծում ենք, որ եթե օրենսդրական մակարդակով սահմանվի գնանշման հարցման ընթացակարգի կիրառման մեր կողմից առաջարկվող պայմանները, ապա դա որոշակիորեն կլուծի նաև մեկ անձից գնում կատարելու այն դեպքերի հետ կապված վերոնշյալ մտահոգիչ երևույթները, որոնք վերաբերում են լայն սպառման ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերմանը: Մեկ անձից կատարվող գնումների վերաբերյալ պրակտիկայի ուսումնասիրությունը¹ ցույց է տալիս, որ այս ընթացակարգը բավականին հաճախ է կիրառվում հենց լայն սպառման ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերման համար, որոնց դեպքում միակ պայման է դառնում հենց գնման առարկայի գինը: **Հետևաբար կարծում ենք, որ գնանշման հարցման կիրառումը լայն սպառման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների ձեռքբերման դեպքում որոշակիորեն կսահմանափակի մեկ անձից գնում կատարելու կոռուպցիոն ռիսկերը:**

Բացի այդ՝ գնումների վերաբերյալ գործող օրենսդրությունը նախատեսում է նաև հնարավորություն՝ գնումներ կատարելու ապրանքի, աշխատանքի կամ ծառայության բորսաներից: Այդուհանդերձ, նշված ընթացակարգը հռչակագրային բնույթ է կրում, քանի որ այն կիրառելու կարգ սահմանված չէ: Աշխարհում բորսաների զարգացման պայմաններում արդարացված է նման ընթացակարգի կիրառման հնարավորություն նախատեսելը, բայց նայնպես անհրաժեշտ է նաև մանրամասնորեն սահմանել նշված ընթացակարգի կիրառման կարգը: **Բորսաների միջոցով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը նույնպես կարող է փոխարինել մեկ անձից գնում կատարելու ընթացակարգին, ինչը ոչ միայն կնվազեցնի այնպիսի մտահոգիչ դեպքերը, ինչպիսիք են անընդհատ նույն անձի հետ պայմանագրի կնքումը, այլ նաև հնարավորություն կտա խնայել պետական բյուջեի միջոցները՝ նկատի ունենալով, որ բորսաներում պայմանագիր կնքվում է հենց գնի միջոցով մրցակցության արդյունքում²:**

Հետևաբար, կարծում ենք, որ մեկ անձից գնում կատարելու՝ «եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը» հիմքը պետք է փոխարինել «եթե անհնար կամ դժվար է այլ ընթացակարգերի կիրառումը»:

Եվ վերջապես, մեզ համար նույնպես խիստ մտահոգիչ է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի բարձրացած այն խնդիրը, որ չի հիմնավորվում մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի կիրառման անհրաժեշտությունը: **Մինչդեռ կարծում ենք, որ ինչպես մեկ անձից գնման, այնպես էլ այլ՝ մրցույթների համեմատ նվազ մրցակցային ընթացակարգերի (այդ թվում՝ գնանշման հարցման) կիրառման դեպքերում պետք է մանրամասն հիմնավորվի տվյալ ընթացակարգի կիրառման անհրաժեշտությունը:**

¹ Տե՛ս, օրինակ, հետևյալ կայքում <https://www.e-gov.am/transparent/>, վերջին մուտքը՝ 07.12.2018 թվականին:

² Առավել մանրամասն տե՛ս **Տ.Կ. Բարսեղյան**, Գործարարական իրավունք: Ղասազիք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, էջ 128-141:

րառման անհրաժեշտությունը՝ այն հրապարակելով, օրինակ, հրավերի կամ հայտարարության տեքստում կամ առանձին տեքստով:

Կարծում ենք, որ վերոնշյալ կարգավորումները հնարավորություն կտան օրենսդրության մեջ նվազագույնի հասցնել կոռուպցիոն ռիսկերը, որ կարող են առաջանալ համեմատաբար ոչ մրցակցային ընթացակարգեր կիրառելու ժամանակ:

ՀՀ գործող օրենսդրությունը, ի տարբերություն, օրինակ, Ռուսաստանի Ղաշնության օրենսդրության, չի նախատեսում մի քանի պատվիրատուների կողմից համատեղ գնում կատարելու հնարավորություն, երբ մի քանի պատվիրատու հանդես են գալիս որպես մեկ սուբյեկտ, կազմակերպում են մեկ գնման ընթացակարգ, սակայն հաղթողին որոշելուց հետո դարձյալ առանձնաձև են, և յուրաքանչյուր պատվիրատու կնքում է առանձին պայմանագիր իրեն առնչվող մասով: Համատեղ գնում կազմակերպելու նպատակը գնման ընթացակարգի կազմակերպման արդյունավետությունը բարձրացնել է՝ նկատի ունենալով, որ այս դեպքում ավելի դյուրին է դառնում կազմակերպչական գործընթացը¹: Համատեղ գնումը կազմակերպվում է, երբ նույնանուն ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կարիք ծագում է միաժամանակ մի քանի պատվիրատուների մոտ: Այդ նպատակով վերջիններս կնքում են համաձայնագիր, որում սահմանում են կողմերի իրավունքներն ու պարտականությունը, որոշում գնման կազմակերպչին, սահմանում համատեղ գնումների ժամկետները և այլն: Ընդ որում, համատեղ գնում կատարելը պատվիրատուների իրավունքն է, ոչ թե պարտականությունը²:

Ռուսաստանի Ղաշնությունից բացի՝ համատեղ գնում կազմակերպվում է նաև այլ պետություններում, օրինակ՝ Ֆրանսիայում՝ առավելապես գրասենյակային պարագաների ձեռքբերման նպատակով³:

Համատեղ գնման ներդրումը Հայաստանի Հանրապետությունում հնարավորություն կտար, օրինակ, մի քանի գյուղերի համայնքապետարանների կազմակերպել համատեղ գնման ընթացակարգ, կենտրոնացնել միջոցները, ռեսուրսները, այնուհետև յուրաքանչյուր համայնք հաղթողի հետ կկնքեր պայմանագիր՝ ըստ իր պահանջի: Այն հնարավորություն կտար խնայել բյուջեի միջոցները, քանի որ համատեղ գնում կատարելու հիմքը մի քանի նույնանուն ապրանքների, ծառայությունների և աշխատանքների՝ մի քանի պատվիրատուների կարիքի առաջացումն է: Բացի այդ՝ այն կլուծեր նաև մեկ այլ կարևոր խնդիր՝ անհրաժեշտ քանակի որակավորված մասնագետների բացակայության խնդիրը մարզերի հեռավոր համայնքներում:

Համատեղ գնում կազմակերպելը բավականին արդյունավետ կարող էր լինել նաև մի քանի պետական մարմինների համար նույնանուն ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կարիքի առաջացման դեպքում: Մասնավորապես, հնարավոր է, որ գործունեության ոլորտով նման մի քանի նախարարություն-

¹ Ռուսաստանի Ղաշնությունում համատեղ գնումների կազմակերպման առանձնահատկությունների մասին տե՛ս, օրինակ, **Кичик К.В.** Государственный (муниципальный) заказ как средство государственного регулирования экономики: правовые вопросы, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2011, էջ 97-99, 172-173, **Пятков Д.В.** Участие Российской Федерации, субъектов Российской Федерации и муниципальных образований в гражданских правоотношениях: на примере разграничения публичной собственности, СПб, 2003, էջ 61:

² St`u Комментарий к Федеральному закону О размещении заказов на поставки товаров, выполнение работ и оказание услуг для государственных и муниципальных нужд /Под общ. ред. проф. Ю.А. Тихомирова, Изд. 2-е, перераб. и доп. - М.: ЗАО Юстицинформ, 2007, էջ 83:

³ St`u Международный прокьюремент /В. Малочко, Т. Уилсон, Г. Вестринг, К. Мера и др./, Москва, 2003, էջ 38-39, ինտերնետային աղբյուր՝ <http://gosbook.ru/system/files/documents/2011/04/27/Prokiurement.pdf>, վերջին մուտքը՝ 25.02.2018 թվականին:

նում առաջանա միևնույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման անհրաժեշտություն: Օրինակ՝ ՀՀ մշակույթի նախարարությունը և ՀՀ սփյուռքի նախարարությունը պատրաստվում են իրականացնել որոշակիորեն նմանատիպ ծրագրեր, որոնց կազմակերպման համար երկուսին էլ անհրաժեշտ են նույնանման ծառայություններ: Համատեղ գնման դեպքում կկազմակերպվեր մեկ գնման ընթացակարգ, որից հետո յուրաքանչյուր նախարարություն, ըստ իր ունեցած պատվերի, կկքներ ինքնուրույն պայմանագիր: Մինչդեռ գործող կարգավորման պայմաններում պետք է կազմակերպվեն առանձին, ինքնուրույն ընթացակարգեր, ինչը, բացի կազմակերպչական դժվարություններից, ավելացնում է նաև բյուջեի ծախսերը:

Համատեղ գնումների որոշակի մասնակի դրսևորում է Հայաստանի Հանրապետությունում գործող կենտրոնացված կարգով գնման գործընթաց կազմակերպելու հնարավորությունը, որը, սակայն, չի նույնանում համատեղ գնման հետ՝ նկատի ունենալով սահմանափակ ընթացակարգերը և սահմանափակ սուբյեկտների կողմից այն կիրառելու հնարավորությունը: Այսպես, «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին հավելվածի՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» համաձայն՝ նախատեսվում է երկու տեսակի կենտրոնացված գնում կատարելու հնարավորություն.

1. պետության կարիքների համար կենտրոնացված կարգով գնման գործընթաց,

2. պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների համար կենտրոնացված կարգով գնման գործընթաց:

Առաջինի դեպքում գործում են հետևյալ առանձնահատկությունները: Նախ՝ այն կազմակերպում է լիազորված մարմին հանդիսացող ՀՀ ֆինանսների նախարարությունը կամ ՀՀ ֆինանսների նախարարի կողմից լիազորված պետական հիմնարկը կամ իրավաբանական անձը՝ էլեկտրոնային աճուրդների միջոցով գնում կատարելու համար սահմանված ընթացակարգով: Գնվելիք ապրանքների և ծառայությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը¹: Այսինքն՝ տվյալ դեպքում միակ կիրառելի ընթացակարգն էլեկտրոնային աճուրդներն են, իսկ ապրանքների և ծառայությունների ցանկն էլ սահմանափակ է:

Կենտրոնացված գնման դեպքում կնքվում է գլխավոր պայմանագիր գնում կատարող լիազոր մարմնի և հաղթող մասնակցի հետ: Այնուհետև պատվիրատուն ներկայացնում է պահանջ գնում կատարող լիազոր մարմնին, որի հիման վրա վերջինս կնքում է համաձայնագիր հաղթող մասնակցի հետ: Համաձայնագրով գնորդի իրավունքներն ու պարտականությունները կատարում է պատվիրատուն՝ բացառությամբ դատական վեճերի լուծման և պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գանձման գործառույթի, որն իրականացնում է գնում կատարող մարմինը:

Նկատի ունենալով, որ հետազոտություն կատարելու ժամանակահատվածում (մասնավորապես՝ 2018 թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ) կենտրոնացված

¹ Նշված ցանկ սահմանված է «Պետության կարիքների համար կենտրոնացված գնման ենթակա ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների անվանացանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի N 68 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 12.03.2001 թվականի թիվ 180 որոշմամբ (սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2001.03.22/10(142) Հոդ.225): Այդուհանդերձ, մեր կողմից կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 03.09.2018 թվականի գրությամբ հայտնել է, որ կենտրոնացված կարգով գնվելիք ապրանքների և ծառայությունների ցանկ հաստատված չէ, ուստի կարող ենք եզրահանգել, որ 2001 թվականի որոշումը թեև դեռ ուժը չի կորցրել, սակայն ներկայումս չի կիրառվում, քանի որ նոր օրենքի ընդունումը ենթադրում է նոր որոշում:

կարգով գնում անցկացված չէր, մեր կողմից հարցում է կատարվել լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը: Հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ և՛ գլխավոր պայմանագիրը, և՛ համաձայնագիրը պետք է ստորագրի գնման գործընթացը կազմակերպող մարմինը, այսինքն՝ պատվիրատուն որևէ պայմանագիր չի ստորագրում, սակայն պատվիրատուն է ընդունում իր կարիքների համար ձեռքբերվող ապրանքները, աշխատանքները և ծառայությունները, վճարում դրանց դիմաց, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունները խախտելու դեպքում՝ կիրառում պատասխանատվության միջոցներ:

Կարծում ենք պետության կարիքների համար կենտրոնացված կարգով գնման գործընթացի վերաբերյալ գործող օրենսդրությամբ սահմանված կարգավորումը հնարավորություն կտա հանրապետական գործադիր մարմինների համար նվազագույն կազմակերպչական ռեսուրսների ծախսմամբ կազմակերպել գնման ընթացակարգեր՝ յուրաքանչյուր պատվիրատուի կարիքների հաշվառմամբ: Մեր կարծիքով, արդարացված է համարվում նման ընթացակարգի ներդրումը Հայաստանի Հանրապետությունում, քանի որ այն հնարավորություն է տալիս տարբեր պետական պատվիրատուների համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել մեկ մարմնի միջոցով՝ միաժամանակ ապահովելով յուրաքանչյուր պատվիրատուի իրավունքները և շահերը, քանի որ բուն պայմանագրային իրավունքներն ու պարտականությունները կատարվում են ոչ թե լիազոր մարմնի, այլ համապատասխան պատվիրատուի կողմից:

Ինչ վերաբերում է կենտրոնացված կարգով գնում կատարելու մյուս տեսակին, ապա պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների համար կենտրոնացված կարգով գնման գործընթաց կարող է կազմակերպվել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմին հանդիսացող պատվիրատուի կառավարման համակարգում գործող պետական կամ համայնքային ոչ առևտրային կապության կամ համայնքի հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կարիքների համար կատարվող գնումների դեպքում: Վերջիններիս ղեկավարները կազմում և իրենց ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմին (վերադաս պատվիրատու) են ներկայացնում սահմանված կարգով հաստատված գնման հայտերը: Վերադաս պատվիրատուն ստացված հայտերի հիման վրա կազմում ու հրապարակում է կենտրոնացված կարգով իրականացվող գնումների պլանը:

Այդտեղ ներառված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման գործընթացները կազմակերպում է վերադաս պատվիրատուն: Գնման ընթացակարգի ընտրությունն իրականացնում է վերադաս պատվիրատուն՝ հիմք ընդունելով օրենքի և «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» պահանջները՝ բացառությամբ մեկ անձից գնում կատարելու գործընթացի: Կենտրոնացված կարգով գնումների կազմակերպումը, պայմանագրերի կնքումը, պայմանագրերի արդյունքների ընդունումը և դրանց դիմաց վճարումների կատարումն իրականացվում են «Գնումների գործընթացի կազմակերպման կարգով» սահմանված պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր կազմակերպության կարիքի բավարարման համար ընտրված մասնակցի հետ վերադաս պատվիրատուն կնքում է առանձին պայմանագիր, որով պատվիրատուի (գնորդի) իրավունքների ու պարտականությունների իրականացումը վերապահվում է տվյալ կազմակերպությանը: Ընդ որում, տվյալ դեպքում նույնպես պայմանագիրը ստորագրում է վերադաս պատվիրատուն, սակայն պայմանագրային իրավունքներն ու պարտականությունները, կենտրոնացված կարգով գնման նախորդ տեսակի նմանությամբ, իրականացնում է պատվիրատուն:

Ամփոփելով կենտրոնացված գնումների գործընթացների վերաբերյալ վերոգրյալ վերլուծությունները կարելի է արձանագրել, որ առաջին տեսակի դեպքում թույլատրելի գնման ընթացակարգը միայն էլեկտրոնային աճուրդներն են, իսկ երկրոր-

դի դեպքում թույլատրելի են բոլոր ընթացակարգերը՝ բացի մեկ անձից գնման ընթացակարգից: Առաջինի դեպքում հանրապետական մի շարք գործադիր մարմիններ միավորվում են կոնկրետ տեսակի գնումներ կատարելու համար, իսկ գնումը կատարում է հատուկ ստեղծված մարմինը: Երկրորդ դեպքում պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կամ պետության կամ համայնքի հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կարիքների համար գնում է կազմակերպում վերջիններիս վերահսկող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը¹:

Հետևաբար կարող ենք արձանագրել, որ թեև կենտրոնացված կարգով գնման ընթացակարգ կազմակերպելը որոշակիորեն լուծում է հատկապես «փոքր պատվիրատուների» խնդիրները, սակայն այն ունի սահմանափակ կիրառում նկատի ունենալով ընթացակարգերի և պատվիրատուների շրջանակի սահմանափակվածությունը:

Ուստի, չնայած արդարացված ենք համարում կենտրոնացված կարգով գնումների ընթացակարգի ներդրումը Հայաստանի Հանրապետությունում, սակայն կարծում ենք, որ անհրաժեշտ է ներդնել նաև համատեղ գնումների ընթացակարգ, որն ավելի ձկուն է, հնարավորություն է տալիս յուրաքանչյուր դեպքի (ոչ թե միայն նախապես սահմանված ցանկին համապատասխան ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների) համար միավորել մի քանի պատվիրատուների ռեսուրսները, իրականացնել կազմակերպչական հարցերի լուծումն ավելի քիչ ծախսերով՝ միաժամանակ ապահովելով յուրաքանչյուր պատվիրատուի ինքնուրույնությունը:

¹ <http://gnumner.am/hy/> կայքում (վերջին մուտքը՝ 07.12.2018 թվականին) տե՛ս տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կազմակերպված նմանատիպ գնումների մի շարք օրինակներ: Այս կապակցությամբ մեր հարցմանն ի պատասխան՝ միայն ՀՀ առողջապահության նախարարությունն է տրամադրել իր ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ-ների կարիքների համար՝ «Քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարված գնման գործընթացի փաստաթղթերը: Նշյալ կայքում նման դեպքեր 11.10.2018 թվականի դրությամբ հրապարակված չեն:

ПРОЦЕДУРЫ ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПОК В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ

Нане Саакян

Аспирант кафедры гражданского права ЕГУ

Законодательство Республики Армения о закупках, определяющее ряд процедур закупок, является неполным для учета особенностей сущности этих процедур, что на практике приводит к серьезным проблемам, включая коррупцию. В этой работе были подняты существующие законодательные вопросы и был предложен ряд механизмов для их решения.

PUBLIC PROCUREMENT PROCEDURES IN THE REPUBLIC OF ARMENIA

Nane Sahakyan

PhD student at YSU Chair of Civil Law

The legislation of the Republic of Armenia on procurement, defining various types of procurement procedures, is incomplete to take into account the peculiarities of the nature of these procedures, which in practice leads to serious problems, including from the point of corruption. In this paper, existing legislative issues were raised and a number of mechanisms were proposed for their resolution.

Բանալի բառեր – պետական գնումներ, գնման ընթացակարգեր, մրցույթ, էլեկտրոնային աճուրդ, գնանշման հարցում, մեկ անձից գնում, համատեղ գնում, կենտրոնացված գնում

Ключевые слова - государственные закупки, процедуры закупок, конкурс, электронный аукцион, запрос котировок, закупки у единственного поставщика, совместные закупки, централизованные закупки

Key words – public procurement, procurement procedures, tender, electronic auction, request for quotations, procurement from a single supplier, joint procurement, centralized procurement